ԵԴ1/4201/01/25
(ՀԿԴ/0159/01/26)

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՎԱՐՈՒՅԹԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

6 հուլիսի 2026 թվական ք.Երևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ Լիլիթ Թադևոսյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ Համլետ Ասատրյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի նախագահ Արթուր Դավթյանս, ուսումնասիրելով թիվ ԵԴ1/4201/01/25 (ՀԿԴ/0159/01/26) քրեական վարույթի ընդդատության հարցը լուծելու համար ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին Հակակոռուպցիոն դատարանի՝ 2026 թվականի հունիսի 17-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի Ն Ք

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2025 թվականի նոյեմբերի 18-ին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանում ստացվել է Արման Ռոլանդի Վարդանյանի վերաբերյալ՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քրեական օրենսգիրք) 38-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, Վազգեն Վաչագանի Կարապետյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 38-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, Գարիկ Գագիկի Մհերյանի վերաբերյալ՝ 2 (երկու) դրվագ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և Հայկազ Ֆահրադի Աբրահամյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով թիվ 62292325 (ԵԴ1/4201/01/25) քրեական վարույթը:

1.1. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը (դատավոր Ա.Մելիքսեթյան) 2025 թվականի նոյեմբերի 21-ին որոշում է կայացրել թիվ ԵԴ1/4201/01/25 քրեական վարույթն ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2026 թվականի հունիսի 5-ին՝ նախնական դատալսումների ընթացքում, որոշում է կայացրել թիվ ԵԴ1/4201/01/25 քրեական վարույթն ըստ առարկայական ընդդատության Հակակոռուպցիոն դատարան ուղարկելու մասին:

3. Հակակոռուպցիոն դատարանը (դատավոր Վ.Ստեփանյան) 2026 թվականի հունսի 17-ին որոշում է կայացրել թիվ ՀԿԴ/0159/01/26 (ԵԴ1/4201/01/25) քրեական վարույթը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին՝ ընդդատության հարցը լուծելու համար:

4. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2026 թվականի հունիսի 24-ին:

<u>Ընդդատության հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

5. Գարիկ Մհերյանի նկատմամբ 2 (երկու) դրվագ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով հանրային քրեական հետապնդում է հարուցվել հանրորեն վտանգավոր այն արարքի համար, որ նա *«(…) ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) աշխատակազմի ղեկավարի 2007 թվականի հոկտեմբերի 24-ի թիվ **-*** *, 2009 թվականի օգոստոսի 21-ի թիվ ***** *, 2013 թվականի օգոստոսի 26-ի թիվ ***-* և նույն թվականի դեկտեմբերի 11-ի թիվ ***-* հրամաններով համապատասխանաբար զբաղեցնելով Կոմիտեի աշխատակազմի Էրեբունի տարածքային ստորաբաժանման անշարժ գույքի գրանցման բաժնի առաջատար օպերատորի, նույն տարածքային ստորաբաժանման անշարժ գույքի հաշվառման բաժնի առաջին կարգի մասնագետի, Կոմիտեի աշխատակազմի Երևանի տարածքային ստորաբաժանման անշարժ գույքի ռեգիստրի պաշտոնները, իր աշխատանքային գործունեության ընթացքում ծանոթացել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման*

գործընթացին, իրավունքի պետական գրանցման համար պահանջվող փաստաթղթերի ցանկին, այդ գործընթացում փաստաթղթաշրջանառության ձևին, ինչպես նաև կադաստրային գործերի կազմման կարգին, միաժամանակ մտերիմ հարաբերություններ է ձևավորել Կոմիտեի այլ պաշտոնատար անձանց հետ, որպիսի պայմաններում իր վերոհիշյալ հնարավորությունները և հմտություններն օգտագործելով Հայկազ Ֆահրադի Աբրահամյանի հետ նախնական համաձայնությամբ, հափշտակել է առանձնապես խոշոր չափերի՝ 51.886.590 ՀՀ դրամ շուկայականին մոտարկված կադաստրային արժեքով գույք: Այսպես՝

*Հայկազ Աբրահամյանը 2020 թվականի վերջին ծանոթացել ու մտերմացել է 2007-2014 թվականներին ՀՀ կադաստրի կոմիտեում տարբեր պաշտոններ զբաղեցրած և դրանով պայմանավորված հիշյալ պետական մարմնի այլ պաշտոնատար անձանց հետ մտերիմ հարաբերությունների մեջ գտնվող Գարիկ Միերյանի հետ, ինչից հետո՝ 2021 թվականին մտադրվել են դիտավորությամբ իրականությունը խեղաթյուրելու՝ կոնկրետ փաստերը ձևախեղելու միջոցով հափշտակել առանձնապես խոշոր չափերի՝ համայնքային սեփականություն հանդիսացող, *****, ********** * ****** փողոցներին հարող հատվածում գտնվող, 0,4935 հա մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության հողամասը:*

*Գարիկ Միերյանի և Հայկազ Աբրահամյանի միջև պայմանավորվածություն է ձեռք բերվել հողամասը Հայկազ Աբրահամյանի կամ նրա կողմից մատնանշված անձի անունով ձևակերպումներն անելուց հետո Հայկազ Աբրահամյանի կողմից Գարիկ Միերյանին գումար տալու վերաբերյալ: Այնուհետև Հայկազ Աբրահամյանը Գարիկ Միերյանին է տրամադրել ** ****՝ Ա.Փ.-ի անձնագրային տվյալները և խնդրել, որպեսզի հողամասը ձևակերպվի նրա անունով:*

Դրանից հետո Գարիկ Միերյանի խնդրանքով նրա մտերիմ Շ.Լ.-ի և քննությամբ դեռևս չպարզված անձանց կողմից հիշյալ հողամասի վերաբերյալ կազմվել է կեղծ կադաստրային գործ, որում, ի թիվս այլնի, դրվել են Երևանի քաղաքապետի կեղծ որոշում, հողամասի առուվաճառքի կեղծ պայմանագիր, վճարման կեղծ անդորրագրեր, անշարժ գույքի պետական գրանցում կատարելու վերաբերյալ Ա.Փ.-ի անվամբ կազմված կեղծ դիմում, հողամասը Ա.Փ.-ի անվամբ գրանցված լինելու վերաբերյալ սեփականության իրավունքի կեղծ վկայական և այլ փաստաթղթեր,

*որոնք բովանդակել են տեղեկություններ այն մասին, թե իբր Երևանի քաղաքապետի՝ 2005 թվականի օգոստոսի 4-ի ****-* որոշման հիման վրա 2005 թվականի օգոստոսի 9-ին կնքված առուվաճառքի պայմանագրով Ա.Փ.-ն, 26.789.300 ՀՀ դրամով գնել է ***** ****** ********** * ****** փողոցներին հարող տարածքում գտնվող՝ 4935 քմ մակերեսով հողամասը:*

*Այնուհետև Հայկազ Աբրահամյանի պահանջով *** *****՝ Ա.Ա.-ն, որպես Ա.Փ.-ի կողմից լիազորված անձ, դիմում է ներկայացրել Երևանի քաղաքապետարան, որից հետո հափշտակության առարկա հանդիսացող հողամասին տրամադրվել է *.*****, ********, ****** *****, ****** *. * հասցեն:*

*Դրանից հետո կեղծ կադաստրային գործը՝ ՀՀ կադաստրի կոմիտեի գրանցման էլեկտրոնային «ARPIS» համակարգ մուտքագրելու հնարավորություն ստեղծելու համար Հայկազ Աբրահամյանի պահանջով 2021 թվականի օգոստոսի 21-ին Ա.Ա.-ն դիմում է ներկայացրել ՀՀ կադաստրի կոմիտեի Շենգավիթ սպասարկման գրասենյակ՝ խնդրելով կատարել անշարժ գույքի հասցեի գրանցում և տրամադրել միասնական տեղեկատվություն: Նույն ժամանակ Գարիկ Մհերյանի կազմակերպմամբ և միջնորդությամբ, *.*****, ********, ****** *****, ****** *. * հասցեի հողամասի վերաբերյալ կազմված կեղծ կադաստրային գործը ՀՀ կադաստրի կոմիտեի դեռևս չպարզված պաշտոնատար անձանց կողմից պաշտոնեական դիրքի չարաշահման և պաշտոնեական կեղծիքների արդյունքում նախ տեղադրվել է ՀՀ կադաստրի կոմիտեի արխիվում, ապա վերոհիշյալ կեղծ փաստաթղթերը տեսանեռածվել և մուտքագրվել են կադաստրի կոմիտեի գրանցման էլեկտրոնային «ARPIS» համակարգ: Արդյունքում՝ 2021 թվականի օգոստոսի 17-ին որպես *.*****, ********, ****** *****, ****** *. * հասցեի հողամասի իրավունքի սուբյեկտ մատնանշվել է Ա.Փ.-ն՝ այդ կերպ խաբեության եղանակով՝ կեղծ փաստաթղթերի օգտագործմամբ ուղղակի դիտավորությամբ Հայաստանի Հանրապետությունից հափշտակելով առանձնապես խոշոր չափերով՝ 51.886.590 ՀՀ դրամ շուկայականին մոտարկված կադաստրային արժեքով գույք, ինչից հետո Հայկազ Աբրահամյանը և Գարիկ Մհերյանը ձեռք են բերել հիշյալ անշարժ գույքը փաստացի տնօրինելու և օգտագործելու հնարավորություն:*

Գարիկ Միհրյանի կողմից հողամասը փաստացի Հայկազ Աբրահամյանինը դարձնելու գործընթացի իրականացման ավարտից հետո՝ 2021 թվականի ամռանը, Հայկազ Աբրահամյանը ձեռք բերված պայմանավորվածության համաձայն Գարիկ Միհրյանին է փոխանցել 22.405.000 ՀՀ դրամ գումար:

(…)

Բացի այդ, Գարիկ Միհրյանը Արման Ռոլանդի Վարդանյանի և Վազգեն Վաչագանի Կարապետյանի օժանդակությամբ կատարել է առանձնապես խոշոր չափերի՝ 58.990.317 ՀՀ դրամ շուկայականին մոտարկված կադաստրային արժեքով գույքի հափշտակություն: Այսպես՝

Արման Վարդանյանը փևական ժամանակ ճանաչել և ընկերական հարաբերություններ է ունեցել Վազգեն Կարապետյանի հետ: Վերջինս դեռևս չպարզված հանգամանքներում ծանոթացել և մտերմություն է հաստատել 2007-2014 թվականներին ՀՀ կադաստրի կոմիտեում տարբեր պաշտոններ զբաղեցրած և դրանով պայմանավորված հիշյալ պետական մարմնի այլ պաշտոնատար անձանց հետ կապեր հաստատած Գարիկ Գագիկի Միհրյանի հետ:

*Արման Ռոլանդի Վարդանյանը 2021 թվականին նախնական համաձայնություն է ձեռք բերել իր մտերիմներ Վազգեն Կարապետյանի և ՀՀ կադաստրի կոմիտեում տարբեր պաշտոններ զբաղեցրած և դրանով պայմանավորված հիշյալ պետական մարմնի այլ պաշտոնատար անձանց հետ կապեր հաստատած Գարիկ Գագիկի Միհրյանի հետ, դիտավորությամբ իրականությունը խեղաթյուրելու՝ կոնկրետ փաստերը ձևախեղելու միջոցով հափշտակել առանձնապես խոշոր չափերի՝ համայնքային սեփականություն հանդիսացող, Երևանի «Կենտրոն» թաղային համայնքի անվամբ գրանցված՝ *.*****, *****-**** ****** ** ****** գտնվող 256,3 քմ մակերեսով ոչ բնակելի անշարժ գույքը: Արման Վարդանյանը նախապես խոստացել է ձեռք բերել *.*****, *****-**** ****** ** ****** գտնվող 256,3 քմ մակերեսով ոչ բնակելի անշարժ գույքը, որը կեղծ փաստաթղթերի օգտագործմամբ պետք է հափշտակվեր:*

Հափշտակության առարկա հանդիսացող հիշյալ անշարժ գույքը հափշտակելու, այն փաստացի տնօրինելու հնարավորություն ստանալու համար, ինչպես նաև նպատակ ունենալով քողարկելու առանձնապես խոշոր խարդախության

*արդյունքում հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքի հանցավոր ծագումը, դրա իրական բնույթը, ծագման աղբյուրը, փնօրինման եղանակը, իրական իրավունքներն ու պատկանելությունը, հանցավոր մտադրությունն իրականացնելու նպատակով Վազգեն Կարապետյանը խնդրել է ** ***** Ա.Խ.-ին *.*****, *****-**** ****** ** ****** գտնվող 256,3 քմ մակերեսով ոչ բնակելի անշարժ գույքը գրանցել վերջինիս հորաքույր Ն.Խ.-ի անվամբ՝ այդ կերպ միջոցներ տրամադրելու եղանակով օժանդակելով խարդախությամբ առանձնապես խոշոր չափերով գույքի հափշտակությանը և առանձնապես խոշոր չափերով փողերի լվացմանը:*

*Այնուհետև, 2021 թվականի քննությամբ չպարզված օրը Գարիկ Միրյանի խնդրանքով նրա մտերիմ Շ.Լ.-ի և քննությամբ դեռևս չպարզված անձանց կողմից կազմվել են համայնքային սեփականություն հանդիսացող, Երևանի «Կենտրոն» թաղային համայնքի անվամբ գրանցված՝ ***** ******, *****-**** ***** ** ***** գտնվող 256,3 քմ մակերեսով ոչ բնակելի տարածքի առուվաճառքի կեղծ պայմանագիր, վճարման կեղծ անդորրագիր, անշարժ գույքի պետական գրանցում կատարելու վերաբերյալ կեղծ դիմում և այլ փաստաթղթեր, որոնք բովանդակել են տեղեկություններ այն մասին, թե իբր, հիմք ընդունելով Երևանի «Կենտրոն» թաղային համայնքի ավագանու 28.04.2005 թվականի թիվ */** որոշումը, Ն.Խ.-ն և Երևանի «Կենտրոն» թաղային համայնքը 2005 թվականի օգոստոսի 11-ին կնքել են անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, որով Ն.Խ.-ն 11.000.000 ՀՀ դրամով Երևանի «Կենտրոն» թաղային համայնքից գնել է *.****, *****-**** ** հասցեում գտնվող 256,3 քմ ընդհանուր մակերեսով տարածքը:*

*Դրանից հետո Գարիկ Միրյանի կազմակերպմամբ և միջնորդությամբ, ՀՀ կադաստրի կոմիտեի դեռևս չպարզված պաշտոնատար անձանց կողմից պաշտոնեական դիրքի չարաշահման և պաշտոնեական կեղծիքների արդյունքում վերոհիշյալ կեղծ փաստաթղթերը կցվել են *.*****, *****-**** ** ***** ** **** հասցեում գտնվող անշարժ գույքի վերաբերյալ կազմված և ՀՀ կադաստրի կոմիտեի արխիվում պահվող ********* համարի կադաստրային գործին, ապա Գարիկ Միրյանի կազմակերպմամբ գործով չպարզված պաշտոնատար անձանց միջոցով կադաստրային գործին կցված կեղծ փաստաթղթերը տեսաներածվել և մուտքագրվել են կադաստրի կոմիտեի գրանցման էլեկտրոնային «ARPIS» համակարգ, որից հետո*

*2021 օգոստոսի 13-ին որպես *****, *******, *****_****** ******, ** ****, ** ***** հասցեի անշարժ գույքի իրավունքի սուբյեկտ մասնանշվել է Ն.Խ.-ն՝ ինչից հետո Վազգեն Կարապետյանը, Գարիկ Մհերյանն ու Արման Վարդանյանը ձեռք են բերել հիշյալ անշարժ գույքը փաստացի տնօրինելու և օգտագործելու հնարավորություն:*

*Այնուհետև, նպատակ ունենալով քողարկելու առանձնապես խոշոր չափերով խարդախության արդյունքում հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքի հանցավոր ծագումը, դրա իրական բնույթը, ծագման աղբյուրը, տնօրինման եղանակը, իրական իրավունքներն ու պատկանելությունը, գույքին օրինական տեսք տալու, միևնույն ժամանակ որպես բարեխիղճ ձեռք բերող ներկայանալու նպատակով Արման Վարդանյանը կազմակերպել է հիշյալ անշարժ գույքը Ն.Խ.-ի անունից Ռուսաստանի Դաշնության քաղաքացի Ս.Գ.-ի անվամբ գրանցելու ձևական գործընթացը: 2021 թվականի օգոստոսի 21-ին Վազգեն Կարապետյանի հնդրանքով Ն.Խ.-ն ներկայացել է «Երևան» նոտարական տարածք և իր ստորագրությամբ հաստատել հաիշտրակության առարկա հանդիսացող, *.*****, ******, *****_**** ** ****, *** ** հասցեում գտնվող անշարժ գույքը նույն օրը կնքված ձևական պայմանագրի հիման վրա իբրև 49.000.000 ՀՀ դրամով Ս.Գ.-ին վաճառելու գործարքը: Իր հերթին Արման Վարդանյանի պահանջով վերջինիս ընտանիքի անդամների համար վարորդի ծառայություններ մատուցող Գ.Թ.-ն հանդես է եկել որպես Ս.Գ.-ի լիազորված անձ ու իր ստորագրությամբ հաստատել է անշարժ գույքը Ս.Գ.-ին վաճառվելու հանգամանքը:*

*Դրանից հետո, Արման Վարդանյանի կազմակերպմամբ 2021 թվականի նոյեմբերի 2-ին Ս.Գ.-ի կողմից լիազորված անձ Գ.Թ.-ի և Արման Վարդանյանի **** Ա.Ա.-ի միջև կնքված առուվաճառքի պայմանագրի հիմքով անշարժ գույքը գրանցվել է Ա.Ա.-ի անվամբ՝ այդ կերպ հանցավոր ծագում ունեցող գույքին փոխանցումների միջոցով օրինական տեսք հաղորդելով:*

Այնուհետև, հանցավոր ծագում ունեցող գույքը տնօրինվել է Արման Վարդանյանի հայեցողությամբ, ով էլ 2021 թվականի նոյեմբերի 3-ին հիշյալ անշարժ գույքը գրավադրել է «Հայբիզնեսբանկ» ՓԲ ընկերությունում:

*Դրանից հետո՝ 2023 թվականի հուլիսի 10-ին, Արման Վարդանյանը **** անվամբ գրանցված հիշյալ անշարժ գույքը 45.766.000 ՀՀ դրամով նույն օրը կնքված առուվաճառքի պայմանագրով վաճառել է Երևան քաղաքի բնակիչ Բ. Բ.-ին: (…)»[1]:*

6. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2026 թվականի հունիսի 5-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Ըստ մեղադրանքի փաստական նկարագրության, առնվազն այս փուլում, առանց ապացույցների հետազոտման, հնարավոր չէ միանշանակ դատողություն անել այն մասին, որ թիվ ԵԴ1/4201/01/25 քրեական գործով մեղադրյալ Գարիկ Մհերյանին մեղսագրվող արարքը չի կատարվել իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով, քանի որ ըստ մեղադրանքի՝ Գարիկ Գագիկի Մհերյանը, (…) զբաղեցնելով (…) Կոմիտեի աշխատակազմի Երևանի տարածքային ստորաբաժանման անշարժ գույքի ռեգիստրի պաշտոնները, իր աշխատանքային գործունեության ընթացքում ծանոթացել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման գործընթացին, իրավունքի պետական գրանցման համար պահանջվող փաստաթղթերի ցանկին, այդ գործընթացում փաստաթղթաշրջանառության ձևին, ինչպես նաև կադաստրային գործերի կազմման կարգին, միաժամանակ մտերիմ հարաբերություններ է ձևավորել Կոմիտեի այլ պաշտոնատար անձանց հետ, որպիսի պայմաններում իր վերոհիշյալ հնարավորությունները և հմտություններն օգտագործելով՝ Հայկազ Ֆահրադի Աբրահամյանի հետ նախնական համաձայնությամբ, հափշտակել է առանձնապես խոշոր չափերի՝ 51.886.590 ՀՀ դրամ շուկայականին մոտարկված կադաստրային արժեքով գույք:*

Արդյունքում մեղադրանքի ձևակերպման փաստական կազմի պարագայում առնվազն այս փուլում անկողմնակալ դիտորդի մոտ կարող է ձևավորվել ողջամիտ պատկերացում, որ վերջինիս վերագրված ենթադրյալ արարքը կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով:

[1] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 8, թերթեր 50-55:

Բացի այդ, սույն վարույթն անջատվել է հակակոռուպցիոն կոմիտեում քննվող թիվ 62231722 վարույթից, ավելին՝ 2025 թվականի նոյեմբերի 10-ին թիվ 62292325 քրեական վարույթից անջատվել է մեղադրյալ Շ.Լ.-ի վերաբերյալ մասը՝ թիվ 62315325 քրեական վարույթը: Ստացվում է իրավիճակ, որ եթե մինչդատական վարույթում թիվ 62292325 և Շ.Լ.-ի վերաբերյալ վարույթներ չանջատվեին մեկը մյուսից, ապա այն ենթակա էր լինելու քննության հակակոռուպցիոն դատարանում՝ քանզի նշված վարույթով քննվող գործերի փաստական հանգամանքները փոխկապակցված են թիվ 62225823 նախաքննական համարով վարույթի փաստական հանգամանքների հետ:

Բացի այդ, հարկ է արձանագրել նաև, որ Գարիկ Մհերյանի վերաբերյալ այս պահին ևս մեկ այլ անջատված մասով գործը քննվում է Հակակոռուպցիոն դատարանում (ՀԿԴ/0095/01/23), հետևաբար, առկա է նաև մեկ անձի կողմից մի քանի հանցանքների պարագայում վարույթները մեկ վարույթում միացնելու անհրաժեշտությունը, քանզի դա է պահաջում հանրային շահը, մասնավորապես նաև այն, որ ՀԿԴ/0095/01/23 վարույթում մեղադրյալի նկատմամբ ընտրված է ազատությունից զրկելու հետ կապված խափանման միջոց, բացի այդ նշված վարույթները կապված են նաև փաստական հանգամանքերով, իսկ այնքանով, որքանով երկու վարույթները գտնվում են տարբեր դատարանների վարույթներում, ուստի միացումը կարող է կատարվել ընդդատության ինստիտուտի կիրառմամբ:

Վերոնշյալ հանգամանքների առկայության պայմաններում սույն քրեական գործի քննությունը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի վարույթում կարող է անկողմնակալ դիտորդի մոտ ստեղծել պատկեր՝ քրեական գործի սխալ ընդդատության, ինչը հանգեցնելու է բացասական հետևանքների, քրեադատավարական նորմերի էական խախտման հիմքով դատական ակտի անվերապահ բեկանմանը:

Ամփոփելով վերոնշյալը՝ Դատարանը գտնում է, որ թիվ ԵԴ1/4201/01/25 քրեական գործն ընդդատյա է ՀՀ հակակոռուպցիոն դատարանին: (...)»[2]:

[2] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 9, թերթեր 98-104:

7. Հակակոռուպցիոն դատարանը 2026 թվականի հունիսի 17-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) [Ն]ախևառաջ անդրադառնալով քրեական գործով մեղադրյալներ Արման Ռոլանդի Վարդանյանի, Վազգեն Վաչագանի Կարապետյանի, Հայկազ Ֆահրադի Աբրահամյանի և Գարիկ Գագիկի Միերյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին որոշումների փաստական հիմքի նկարագրությանը՝ Դատարանն արձանագրում է, որ մեղադրյալներից որևէ մեկին չի վերագրվում ՀՀ քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված հանցանքի ենթադրյալ կատարում, քանի որ այն չի պարունակում որևէ փաստական տվյալ քրեական գործով քննության առարկա որևէ հանցանքը պաշտոնեական դիրքը (իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը) օգտագործելով ենթադրաբար կատարելու մասին: Այս առումով Դատարանը հարկ է համարում փաստել, որ օրենսդիրը 2003 թվականի ապրիլի 18-ի ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածով և 190-րդ հոդվածով (…) հանցանքների՝ կառուպցիոն և ոչ կոռուպցիոն բնույթը տարանջատել է ոչ թե այն սկզբունքով, որ ենթադրյալ հանցանքի կատարման մեջ մեղադրվող անձը որևէ ժամանակահատվածում զբաղեցրել է հանրային ծառայության պաշտոն, այլ, ինչպես արդեն նշվել է վերը, հանցանքի օբյեկտիվ կողմը կազմող գործողությունը (անգործությունը) զբաղեցրած պաշտոնից բխող իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն անմիջականորեն օգտագործելով կատարելու փաստով: Հետևաբար՝ ենթադրյալ հանցանքի, սույն դեպքում՝ 2003 թվականի ապրիլի 18-ի ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի օբյեկտիվ կողմը կազմող արարքը պաշտոնավարման ընթացքում ձեռքբերված հնարավորությունների և հմտությունների օգտագործմամբ ենթադրաբար կատարված լինելու հանգամանքը (…) ինքնին չի ենթադրում, որ քննության առարկա ենթադրյալ հանցանքը կրում է կոռուպցիոն բնույթ:*

Ինչ վերաբերում է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դիրքորոշմանն առ այն, որ «հնարավոր չէ միանշանակ դատողություն անել այն մասին, որ թիվ ԵԴ1/4201/01/25 քրեական գործով մեղադրյալ Գարիկ Միերյանին մեղսագրվող արարքը չի կատարվել

իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով», Դատարանը, նախ, արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 276-րդ հոդվածը սահմանում է, որ առաջին ատյանի դատարանում վարույթն իրականացվում է միայն մեղադրյալի նկատմամբ և միայն նրան ներկայացված մեղադրանքով, հետևաբար՝ չեն կարող կատարվել մեղադրանքի փաստական կողմից ուղղակիորեն չբխող նույնիսկ ենթադրական դատողություններ: Բացի այդ, Գարիկ Մհերյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին որոշմամբ ուղղակիորեն սահմանված է, որ վերջինս ՀՀ կադաստրի կոմիտեում աշխատել է 2007-2014 թվականներն ընկած ժամանակահատվածում, իսկ ենթադրյալ հանցանքը, ըստ մեղադրանքի փաստական հիմքի, ենթադրաբար կատարվել է 2020-2021 թվականներին: Այսինքն՝ ակնհայտ է, որ Գարիկ Մհերյանն իրեն թիվ ՀԿԴ/0159/01/26 (ԵԴ1/4201/01/25) քրեական գործի շրջանակներում վերագրվող ենթադրյալ հանցանքը ողջամտորեն չէր կարող կատարել՝ պաշտոնեական դիրքը (իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը) օգտագործելով, քանի որ դրա ենթադրյալ կատարման ժամանակահատվածում ՀՀ կադաստրի կոմիտեում պաշտոն չի զբաղեցրել:

(…) Անդրադառնալով թիվ ՀԿԴ/0159/01/26 (ԵԴ1/4201/01/25) քրեական գործի՝ ՀՀ հակակոռուպցիոն դատարանին ընդդատյա լինելու դիրքորոշման հիմքում դրված մյուս հանգամանքին՝ Դատարանն արձանագրում է, որ քրեական վարույթից մաս անջատելու վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի որոշման իրավաչափության (անհրաժեշտության) գնահատումը դուրս է քրեական գործի ընդդատությունը որոշելու հարցի տիրույթից, և հակառակի մասին վկայող դատավարական ակտի բացակայության պարագայում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի կարգով վարույթից մասի անջատումը պետք է դիտարկել իրավաչափ: Միևնույն ժամանակ Դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը, սահմանելով քրեական վարույթները միացնելու և անջատելու հիմքերն ու կարգը, դրանք չի տարանջատում որպես «հիմնական» և «ածանցյալ» վարույթների, և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 260-րդ հոդվածով սահմանված կարգով ՀՀ հակակոռուպցիոն

դատարանին կարող է ընդդատյա լինել բացառապես ՀՀ քրեական օրենսգրքի հավելված 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ վարույթը (...)։ Այլ կերպ՝ անջատված վարույթով քննության առարկա է հանդիսանում ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասով նախատեսված կոնկրետ արարք, և փվյալ արարքը սահմանող հանցանքով վարույթի ընդդատությունը ենթակա է որոշման ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ քննչական ենթակայությունը (հոդված 181) և դատական վարույթների առարկայական ենթակայությունը (հոդված 260) կանոնակարգող նորմերի պահպանմամբ։ Դատարանի գնահատմամբ, հակառակ մեկնաբանությունը հնարավորություն կտա արհեստականորեն շրջանցել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված ընդդատության իմպերատիվ կարգավորումները, ինչը վերջնարդյունքում կարող է հանգեցնել անձի դատական պաշտպանության՝ ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ մասնակցությամբ միջազգային պայմանագրերով երաշխավորված իրավունքի (իր գործն այն դատարանում քննվելու իրավունք, որի ընդդատությանը այն վերապահված է օրենքով) խաթարմանը։

Միևնույն ժամանակ Դատարանը վերսրին արձանագրում է, որ կոռուպցիոն վարույթից անջատված ոչ կոռուպցիոն բնույթի (ՀՀ քրեական օրենսգրքի հավելված N 1-ով չնախատեսված հանցանքով) վարույթների ընդդատությունը որոշելու հատուկ օրենսդրական կարգավորումների բացակայության պարագայում կիրառման են ենթակա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 260-րդ հոդվածով սահմանված ընդհանուր կանոնները, հետևաբար՝ անջատված վարույթը չի կարող ընդդատյա լինել ՀՀ հակակոռուպցիոն դատարանին, եթե դրանով քննության առարկա հանցանքը (հանցանքներից առնվազն մեկը) ներառված չէ ՀՀ քրեական օրենսգրքի հավելված N 1-ում։

Դատարանի գնահատմամբ, սույն պարագայում ևս կիրառելի է ՀՀ վճռաբեկ դատարանի՝ թիվ ԳԴ/0007/15/23 վարույթով 2025 թվականի հոկտեմբերի 10-ի որոշմամբ ձևավորված մոտեցումը, ըստ որի՝ քրեական վարույթների առարկայական ընդդատությունը ենթակա է որոշման՝ ելնելով քրեական վարույթի հետագա նախաքննության սահմաններից, այդ թվում՝ կոռուպցիոն որևէ հանցանք սահմանող հոդվածով քննություն իրականացնելու հանգամանքից։ ՀՀ վճռաբեկ դատարանի վկայակոչված որոշման համատեքստում չի կարող ընդունելի համարվել

մուրեցումը, ըստ որի՝ ՀՀ քրեական օրենսգրքի հավելված 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքի վերաբերյալ վարույթից անջատված ոչ կոռուպցիոն հանցանքի վերաբերյալ վարույթն ընդդատյա է ՀՀ հակակոռուպցիոն դատարանին այն դեպքում, երբ ՀՀ վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ անկախ այն հանգամանքից, որ քրեական վարույթով ի սկզբանե քննության առարկա է հանդիսացել նաև ՀՀ քրեական օրենսգրքի հավելված 1-ում ներառված հանցանք, սակայն նշված հանցանքով հանրային քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշման կայացման ուժով վարույթն այլևս ընդդատյա չէ ՀՀ հակակոռուպցիոն դատարանին: Այլ կերպ՝ ՀՀ վճռաբեկ դատարանն ուղղակիորեն արձանագրել է, որ քրեական գործի՝ ենթադրյալ կոռուպցիոն հանցանքի փաստի առթիվ հարուցված լինելու հանգամանքն առարկայական ընդդատության հարցի լուծման տեսանկյունից օբյեկտիվորեն չի կարող քրեադատավարական որոշիչ նշանակություն ունեցող գործոն դիտարկվել, հետևաբար՝ այն որպես այդպիսին իրավաչափորեն չի կարող դիտարկվել նաև ենթադրյալ կառուպցիոն հանցանքի կապակցությամբ քննվող վարույթից անջատված և կոռուպցիոն բնույթի որևէ հանցանք չպարունակող վարույթի դեպքում:

(…) Դատարանը, նախ, արձանագրում է, որ ըստ «Datalex.am» դատական տեղեկատվական համակարգի՝ ՀՀ հակակոռուպցիոն դատարանում Շ.Լ.-ի վերաբերյալ որևէ վարույթ չի քննվում, իսկ վերջինիս վերաբերյալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի վարույթում գտնվող թիվ ԵԴ1/0149/01/26 քրեական գործով քննության առարկա չի հանդիսանում ՀՀ քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված ենթադրյալ հնացանք, հետևաբար՝ այն ևս առերևույթ ընդդատյա չէ ՀՀ հակակոռուպցիոն դատարանին:

Անդրադառնալով ՀՀ հակակոռուպցիոն դատարանի վարույթում գտնվող թիվ ՀԿԴ/0095/01/23 քրեական գործին (…), հարկ է փաստել, որ այն ՀՀ հակակոռուպցիոն դատարանում հաստատված մեղադրական եզրակացությամբ ստացվել է դեռևս 2023 թվականի մայիսի 19-ին, և արդեն ավելի քան երեք տարի է, ինչ դրանով իրականացվում է քննություն, իսկ դատաքննությունը, ըստ «Datalex.am» դատական տեղեկատվական համակարգի, գտնվում է հիմնական դատաքննության փուլում:

*Դատարանը հարկ է համարում նաև փաստել, որ թիվ ՀԿԴ/0159/01/26 (ԵԴ1/4201/01/25) քրեական գործով քննության առարկա են ***** ***** *****_**** ***** **** ** հասցեում գտնվող 256,3 քմ մակերեսով ոչ բնակելի տարածքի և **** ***** ********** * ****** ********* ****** ******** գտնվող 0,4935 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հողամասի դրվագներով ենթադրյալ հանցանքները, և ըստ «Datalex.am» դատական տեղեկատվական համակարգի՝ ՀՀ հակակոռուպցիոն դատարանի վարույթում գտնվող թիվ ՀԿԴ/0095/01/23 քրեական գործով նշված դրվագներով ենթադրյալ հանցանք քննության առարկա չի հանդիսանում, հետևաբար՝ առկա չէ թիվ ՀԿԴ/0095/01/23 և թիվ ՀԿԴ/0159/01/26 (ԵԴ1/4201/01/25) վարույթների փաստական հանգամանքներով փոխկապակցվածություն, ինչպես դա փաստվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի՝ 2026 թվականի հունիսի 05-ի որոշմամբ: Ավելին՝ քրեական վարույթների միակ ընդհանրությունը կայանում է երկու վարույթներով Գարիկ Միերյանի՝ մեղադրյալի դատավարական կարգավիճակ ունենալու փաստով, մինչդեռ թիվ ՀԿԴ/0095/01/23 քրեական գործով մեղադրյալի կարգավիճակ ունի թվով վեց, իսկ թիվ ՀԿԴ/0159/01/26 (ԵԴ1/4201/01/25) քրեական գործով՝ չորս անձ:*

Անդրադառնալով թիվ ՀԿԴ/0095/01/23 և թիվ ՀԿԴ/0159/01/26 (ԵԴ1/4201/01/25) վարույթները մեկ վարույթում միացնելու վերաբերյալ դիրքորոշմանը՝ Դատարանը նախևառաջ արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը չի սահմանում տարբեր դատարանների վարույթում գտնվող գործերի միացման ընթացակարգ, ինչն ինքնին բացառում է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից որևէ վարույթ ՀՀ հակակոռուպցիոն դատարանում քննվող վարույթին միացնելու նպատակով այն ՀՀ հակակոռուպցիոն դատարան փոխանցելու հնարավորությունը: Բացի այդ, դատաքննության փուլում գտնվող քրեական վարույթները միմյանց միացնելու հարցի լուծումը գտնվում է համապատասխան դատարանի նախագահի իրավասությունների տիրույթում: Այսինքն՝ դատարանի նախագահն իրավասու է կայացնել կա՛մ վարույթները միացնելու, կա՛մ միացումը մերժելու մասին որոշում, և ՀՀ հակակոռուպցիոն դատարանի վարույթում գտնվող որևէ վարույթի միացնելու նպատակով կոռուպցիոն

բնույթի հանցանք չպարունակող վարույթը մեկ այլ դատարանից ՀՀ հակակոռուպցիոն դատարան ըստ ընդդատության փոխանցելու և այն ՀՀ հակակոռուպցիոն դատարանում քննվող գործին չմիացվելու պարագայում կարող է ստեղծվել իրավիճակ, երբ ՀՀ հակակոռուպցիոն դատարանը քննի, օրինակ, սպանության, խուլիգանության, առևանգման և նման ակնհայտ ոչ կոռուպցիոն հանցանքներով վարույթներ, ինչը նսեմացնում է մասնագիտացված դատարանի ստեղծմամբ օրենսդրի կողմից հետապնդվող նպատակը և տարաբնույթ շահարկումների հնարավորություն է տալիս:

Միևնույն ժամանակ վերստին փաստելով, որ թիվ ՀԿԴ/0095/01/23 քրեական գործով վարույթը, որով արդեն իսկ ավելի քան երեք տարի ընթանում է դատաքննություն, գտնվում է հիմնական դատաքննության փուլում, իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը չի նախատեսում հիմնական դատաքննության փուլում գտնվող քրեական գործին մեկ այլ վարույթի միացման ընթացակարգ՝ Դատարանն արձանագրում է, որ թիվ ՀԿԴ/0159/01/26 (ԵԴ1/4201/01/25) և թիվ ՀԿԴ/0095/01/23 քրեական գործերը միացնելու դեպքում թիվ ՀԿԴ/0095/01/23 քրեական գործով պետք է վերսկսվեն նախնական դատաքննությունները (առնվազն ՀԿԴ/0159/01/26 (ԵԴ1/4201/01/25) քրեական գործով մեղադրյալների մասով նախնական դատաքննություններում քննարկման ենթակա հարցերը քննարկելու համար), իսկ հիմնական դատաքննություններում պետք է վերստին հետազոտվեն թիվ ՀԿԴ/0095/01/23 քրեական գործով արդեն իսկ հետազոտված ապացույցները, քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը չի սահմանում որևէ ապացույց հետազոտված համարվելու կարգավորում: Տվյալ պարագայում ակնհայտորեն ուրնահարվելու է ոչ միայն արդարադատության շահը, այլև թիվ ՀԿԴ/0095/01/23 քրեական գործով քննության առարկա հանդիսացող բազմադրվագ ենթադրյալ հանցանքների մեջ մեղադրվող անձանց՝ ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունքը: Այս պայմաններում Դատարանը հարկ է համարում նաև շեշտել, որ քրեական վարույթներով քննության առարկա ենթադրյալ հանցանքներն առերևույթ կատարվել են մինչև 2021 թվականի մայիսի 05-ի ՀՀ քրեական օրենսգրքի օրինական ուժի մեջ մտնելը, հետևաբար՝ առկա է նաև քրեական պատասխանատվության ենթարկվելու վաղեմության ժամկետները լրանալու ռիսկ:

(…) Դատարանը, հաշվի առնելով քրեական գործով քննության առարկա հանդիսացող ենթադրյալ հանցանքի բնույթը և մինչդատական վարույթում մեղադրյալին մեղսագրված արարքի քրեաիրավական որակումը, գտնում է, որ թիվ ՀԿԴ/0159/01/26 (ԵԴ1/4201/01/25) քրեական գործն ընդդատյա չէ ՀՀ հակակոռուպցիոն դատարանին՝ հաշվի առնելով, որ այն չի հանդիսանում ՀՀ քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքի վերաբերյալ վարույթ, ուստի անհրաժեշտ է թիվ ՀԿԴ/0159/01/26 քրեական գործն ուղարկել ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահին՝ ընդդատության վերաբերյալ վեճը լուծելու համար: (…)»[3]:

<u>Վարույթի առարկայական ընդդատության վերաբերյալ պաշտպան Ա.Մանուկյանի դիրքորոշումը.</u>

8. Դիրքորոշում ներկայացրած անձը, համաձայնելով Հակակոռուպցիոն դատարանի հետևություններին, փաստել է, որ Գարիկ Միերյանին ներկայացված մեղադրանքի փաստական նկարագրի մեջ առկա չէ որևէ նշում առ այն, որ վերջինս իրեն վերագրվող ենթադրյալ հանցանքը կատարել է «իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն» օգտագործելով: Այս առնչությամբ դիրքորոշում ներկայացրած անձը նշել է, որ Գ.Միերյանը ենթադրյալ հանցանքները կատարելու ժամանակ ՀՀ կադաստրի կոմիտեում որևէ պաշտոն չի զբաղեցրել:

Վերոգրյալի հետ մեկտեղ պաշտպանը փաստելով, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանում քննվող թիվ ԵԴ1/0149/01/26 քրեական վարույթով մեղադրյալ Շ.Լ.-ին ներկայացված մեղադրանքը փաստական հանգամանքներով կապված է սույն վարույթով մեղադրյալ Գ.Միերյանին ներկայացված մեղադրանքի հետ, գտել է, որ վերոնշյալ վարույթները պետք է միացվեն, որից հետո ըստ առարկայական ընդդատության փոխանցվեն Հակակոռուպցիոն դատարան: Մասնավորապես, պաշտպանը վերոնշյալ դիրքորոշումը հիմնավորել է՝ հիմք ընդունելով այն, որ Շ.Լ.-ին ներկայացված մեղադրանքը փաստական հանգամանքներով կապված է Հակակոռուպցիոն

[3] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 10, թերթեր 6-25:

դատարանում քննվող թիվ ՀԿԴ/0095/01/23 քրեական վարույթով մեղադրյալ Գ.Միերյանի մեղադրանքի հետ:

8.1. Վերոգրյալի հիման վրա՝ դիրքորոշում ներկայացրած անձը գտնելով, որ սույն վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին, միաժամանակ խնդրել է վարույթի առարկայական ընդդատության հարցը լուծելու մասին որոշման մեջ արձանագրել թիվ ԵԴ1/0149/01/26 և թիվ ԵԴ1/4201/01/25 քրեական վարույթները միացնելու անհրաժեշտությունը:

<u>Սույն որոշման հիմնավորումները և եզրահանգումը.</u>

9. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր է արդյոք Հակակոռուպցիոն դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԵԴ1/4201/01/25 (ՀԿԴ/0159/01/26) քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին:

10. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

11. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք*»:

11.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի*

նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»[4]:

Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ. *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»*[5]:

12. Վճռաբեկ դատարանն անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի հիմնարար նշանակության վերաբերյալ իրավական դիրքորոշում է ձևավորել *Գևորգ Հարությունյանի* որոշմամբ[6]:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 260-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության և Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարաններին (այսուհետ՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան) ընդդատյա են առաջին ատյանի կարգով իրականացվող բոլոր վարույթները, ինչպես նաև դատական երաշխիքների բոլոր վարույթները, բացառությամբ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ, այդ թվում՝ դատական երաշխիքների վարույթների, որոնք ընդդատյա են հակակոռուպցիոն դատարանին»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Նախնական դատաքննության ընթացքում պարզելով, որ տվյալ վարույթն ընդդատյա չէ իրեն, դատարանն այդ որոշմամբ անհապաղ փոխանցում է ըստ ընդդատության:*

(…)

5. Վարույթն ըստ ընդդատության ստացած հակակոռուպցիոն կամ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատաքննություն

---

[4] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

[5] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

[6] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

նշանակելը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին, եթե համաձայն չէ դրա առարկայական ընդդատությանը:

(…)

8. Սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի նախագահը, Վճռաբեկ դատարանի քրեական և հակակոռուպցիոն պալատների նախագահները վարույթը Վճռաբեկ դատարանում սրանալու պահից տասնօրյա ժամկետում վերջնականապես լուծում են վարույթի առարկայական ընդդատության հարցը՝ ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ: Քվեարկելիս ձեռնպահ մնալ չի թույլատրվում:

9. Սույն հոդվածով սահմանված կարգով որոշված դատարանը համարվում է իրավասու դատարան»:

14. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը, արձանագրելով, որ Գ.Միերյանին ներկայացված մեղադրանքի ձևակերպումն անկողմնակալ դիտորդի մոտ կարող է ձևավորվել ողջամիտ պատկերացում, որ վերջինիս վերագրված ենթադրյալ արարքը կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով, ինչպես նաև նկատի ունենալով, որ սույն վարույթն անջատվել է հակակոռուպցիոն կոմետում քննվող թիվ 62231722 վարույթից, գտել է, որ սույն քրեական վարույթն ընդդատյա է Հակակոռուպցիոն դատարանին:

Բացի այդ, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը նշելով, որ Գ.Միերյանի վերաբերյալ մեկ այլ քրեական գործ քննվում է Հակակոռուպցիոն դատարանում, գտել է, որ առկա է նույն անձի կողմից մեկից ավելի ենթադրյալ հանցանքներ կատարելու վերաբերյալ վարույթները մեկ վարույթում միացնելու հիմք[7]:

- Հակակոռուպցիոն դատարանը, արձանագրելով, որ Գ.Միերյանը ՀՀ կադաստրի կոմիտեում աշխատել է 2007-2014 թվականներն ընկած

[7] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

ժամանակահատվածում, իսկ ենթադրյալ հանցանքը ենթադրաբար կատարվել է 2020-2021 թվականներին, գտել է, որ վերջինս իրեն վերագրվող ենթադրյալ հանցանքները չէր կարող պաշտոնեական դիրքը (իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը) օգտագործելով կատարել: Նման պայմաններում Հակակոռուպցիոն դատարանը գտել է, որ ենթադրյալ հանցանքը պաշտոնավարման ընթացքում ձեռքբերված հնարավորությունների և հմտությունների օգտագործմամբ կատարելու հանգամանքն ինքնին չի ենթադրում, որ քննության առարկա ենթադրյալ հանցանքը կոռուպցիոն բնույթի է:

Բացի այդ, Հակակոռուպցիոն դատարանը նշել է, որ կոռուպցիոն վարույթից անջատված ոչ կոռուպցիոն բնույթի վարույթի ընդդատությունը որոշելու հատուկ օրենսդրական կարգավորումների բացակայության պայմաններում, անջատված վարույթը չի կարող ընդդատյա լինել Հակակոռուպցիոն դատարանին, եթե դրանով քննության առարկա հանցանքը կոռուպցիոն բնույթի չէ:

Վերոգրյալի հետ մեկտեղ Հակակոռուպցիոն դատարանն արձանագրել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը չի սահմանում տարբեր դատարանների վարույթներում գտնվող գործերի միացման ընթացակարգ, ինչն ինքնին բացառում է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից որևէ վարույթ Հակակոռուպցիոն դատարանում քննվող վարույթին միացնելու նպատակով այն Հակակոռուպցիոն դատարան փոխանցելու հնարավորությունը[8]:

15. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշմամբ վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ պետք է փաստել, որ սույն վարույթով մեղադրյալներին ներկայացված մեղադրանքների ձևակերպումներից պարզ է դառնում, որ ենթադրյալ հանցանքները ՀՀ քրեական օրենսգրքի «Կոռուպցիոն հանցանքների ցանկ» N 1 հավելվածով սահմանված՝ «***իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելու***» եղանակով կատարելու հատկանիշը վերջիններին

[8] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

վերագրված չէ: Այս առնչությամբ ընդունելի է Հակակոռուպցիոն դատարանի դիրքորոշումն առ այն, որ Գ.Մհերյանին ներկայացված մեղադրանքում տեղ գտած՝ աշխատանքային գործունեության ընթացքում ձեռք բերած ***«հնարավորությունները և հմտություններն օգտագործելով»*** եզրույթն ինքնին, այլ վերաբերելի փաստական տվյալների բացակայության պայմաններում, չի կարող նույնանալ ՀՀ քրեական օրենսգրքի «Կոռուպցիոն հանցանքների ցանկ» N 1 հավելվածով սահմանված՝ ***«իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելու»*** հասկացության հետ՝ հաշվի առնելով նաև, որ Գ.Մհերյանը ենթադրյալ հանցանքը կատարելու ժամանակ ՀՀ կադաստրի կոմիտեում չի աշխատել:

Բացի այդ, սույն վարույթի փաստական հանգամանքների պայմաններում, նկատի ունենալով, որ նախաքննության փուլում գտնվող թիվ 62231722 վարույթով ՀՀ կադաստրի կոմիտեի որևէ պաշտոնատար անձի նկատմամբ կոռուպցիոն բնույթի ենթադրյալ հանցանք կատարելու համար հանրային քրեական հետապնդում հարուցված չէ, գտնում ենք, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի որոշմամբ ներկայացված հիմնավորումները բավարար չեն արձանագրելու, որ սույն քրեական վարույթով մեղադրյալներին ներկայացված մեղադրանքներն անմիջականորեն կապված են Հակակոռուպցիոն դատարանին ընդդատյա կոռուպցիոն հանցանքի վերաբերյալ վարույթի հետ: Նման պայմաններում սույն վարույթի՝ Հակակոռուպցիոն դատարանին ընդդատյա լինելու իրավական հիմքը բացակայում է:

16. Անդրադառնալով պաշտպան Ա.Մանուկյանի դիրքորոշմանը՝ հարկ է նշել, որ թիվ ԵԴ1/0149/01/26 և ԵԴ1/4201/01/25 քրեական վարույթները միացնելու անհրաժեշտության գնահատումը դուրս է վարույթի առարկայական ընդդատության վերաբերյալ վեճի լուծման ընթացքում քննարկման ենթակա հարցերի շրջանակից:

17. Վերոշարադրյալը հիմք է տալիս փաստելու, որ Հակակոռուպցիոն դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԵԴ1/4201/01/25 (ՀԿԴ/0159/01/26) քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին, հիմնավոր է:

18. Հետևաբար, գտնում ենք, որ թիվ ԵԴ1/4201/01/25 (ՀԿԴ/0159/01/26) քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին:

Ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 8-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն Ք

Արման Ռոլանդի Վարդանյանի վերաբերյալ՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 38-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, Վազգեն Վաչագանի Կարապետյանի վերաբերյալ՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 38-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, Գարիկ Գագիկի Միերյանի վերաբերյալ՝ 2 (երկու) դրվագ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և Հայկազ Ֆահրադի Աբրահամյանի վերաբերյալ՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով թիվ ԵԴ1/4201/01/25 (ՀԿԴ/0159/01/26) քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին:

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ	**ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՀԱՄԼԵՏ ԱՍԱՏՐՅԱՆ**	**ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԹՈՒՐ ԴԱՎԹՅԱՆ**